«Լավագույն գիտական աշխատանք». մրցույթ երիտասարդ գիտնականների համար

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը հայտարարում են «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթ երիտասարդ գիտնականների համար:

Մրցույթին կարող են մասնակցել մինչև 45 տարեկան գիտնականները, ովքեր պետք է ներկայացնեն միայն 2020-2022 թթ.-ին հրատարակված գիտական հոդվածներ, հոդվածների շարք, մենագրություններ կամ արտոնագրված աշխատանքներ:

Մրցույթով սահմանվել են 3-ական մրցանակներ 6 անվանակարգերում՝

- ֆիզիկա, մեխանիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա
- տեխնիկական գիտություններ
- քիմիա և Երկրի մասին գիտություններ
- կյանքի մասին գիտություններ
- հայագիտություն և հասարակական գիտություններ
- երկակի նշանակության մշակումներ:

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 15 միլիոն դրամ: Մրցանակակիրները կպարգևատրվեն դրամական պարգևներով և կարժանանան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության պատվավոր դիպլոմների:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը 2022 թ.-ի մայիսի 1-ից օգոստոսի 31-ն է: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն 2022 թ.-ի հոկտեմբեր ամսին:

Մրցույթին ներկայացվող պայմաններին և փաստաթղթերի ցանկին կարելի է ծանոթանալ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնական կայքում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին